Դպրոցները բացելու կոմիտե
Հունիսի 2, 2020 կեսօրից հետո ժամը 4:00, Զում

Ներկաները. Սերա Նիման, Մաթ Հիլլ, Ջոն Պարամո, Շերոն Քուսեռ, Փիտր Քնապիկ, Դեբբի Կատկա, Սալլի Չյու, Սթիվ Ֆերգսոն, Տամի Շերն, Լուիս Այալա, Նադալի Ջոնս, Մարթա Ուոլտերս, Թոնի Ֆրանկո, Քելլի Դանկլ, Շարլին Ուոլտերս, Դագ Գուտիերես, Էմիլիո Յուրիոստե, Դեբբի Մքհորնի, Լենորա Ագիլերա, Լոռի Լիթլ, Չառ Թաբեթ, Ռիկ Վոնկ, Լիսա Ռալուի, Գրեգ Միլլեր, Սու Քոնվեյ, Ռոբին Անդերս, Ռեբեկա Միլաուսկի, Քյաթի Սեսինգհաուս, Շերի Բրկհարթ, Լարրի Քրոս, Կայլի Մքդանալդ, Ստեյսի Քաշման, Ստեֆանի Ֆիլդց, Վենդի Հարվել, Թոմ Քրաուտեր, Ջեն Գոլդենբերգ, (Գալաքսի Թա՞բ, Իքս բոքս օգտագործո՞ղ), Պավել Տանտչն (Բրբենք միջնակարգ դպրոցի աշակերտ)

Մաթ – Նեկայացրեց ակնարկ և թե ինչ է որոնում կրթական գրասենյակը – ինչպե՞ս աշնանը սկսել ուսումնական տարին՝ առաջնահերթություն տալով մեր աշակերտների, աշխատակազմի և ընտանիքների առողջությանն ու անվտանգությանը: Դաշնային և նահանգային կանոնակարգերն ամեն օր փոփոխվում են: Մենք ամեն շաբաթ կտեղադրենք փաստաթղթեր և թարմացումներ:

Սերա – հուսով ենք, որ ինչ-որ կունենանք ներկայացնելու հուլիսի 1-ին: Այս խումբը պետք է առաջարկություններ անի, այլ ոչ թե որոշումներ կայացնի:

Ենթակոմիտեներ և նախագահներ.
- Դասավանդում – Շերոն Քուսեռ
- Սոցիալ հուզական – Ջոն Պարամո
- Ընտանիքի/համայնքի ներգրավվածություն – Փիտր Քնապիկ
- Գործող, առողջապահական և անվտանգության բաժիններ – Դեբբի Կակտա

Ծնողներին ուղարկված հարցաթերթիկի արդյունքների ամփոփում - Շերոն
- Ստացել ենք մոտավորապես 7000 պատասխան
- Յուրաքանչյուր դպրոցի մոտավորապես 50%-ը պատասխանել է
- Պատասխանների մեծամասնությունը ցանկանում է հետազոտել հիբրիդ մոդելը
- Մոտ 50%-ը չի համակերպվում միայն հեռակա ուսման հետ
- Ծնողները գնահատում են անցած ուսումնական տարվա հեռակա ուսուցումը. Զում/Գուգլ միթ, փոքր խմբեր, կանոնավոր հաղորդագրություններ,
- Ի՞նչ եք ցանկանում, որ այլ կերպ անենք. Ավելի շատ ուղիղ եթերի դասեր, գնահատականներ, ավելի շատ Զում/Գուգլ միթ, ավելի կանոնավոր հաղորդագրություն (Շերոնը հավաստիացնում է, որ ապագա հեռակա ուսուցման մոդելը կունենա այս բաղադրիչ մասերը)
- Այլ մտքե՞ր
    - Լրիվ դրույքով ուսուցում դպրոցում
    - Հիբրիդ մոդել
    - Մեկ ու մեջ տարբերակ
    - Մաքրել/ախտահանել
    - 100% հեռակա ուսուցման տարբերակ

    ○ Դիմակներ
    ○ Ջերմության չափում

● Իսպաներեն և հայերեն հարցաթերթիկների արդյունքները շատ նման էին իրար, բայց մտահոգված ենք, որ լեզվի պակասությունը դեր է խաղացել: Ցանկանում են ավելի շատ շփվել ուսուցչի հետ: Դպրոցի ապահով լինելը մտահոգություն է առաջացնում:

Քննարկում ենք, թե ինչպես ամենալավ ձևով արդյունքները տեղադրենք համացանցում: Ռոբին Անդերսը կաշխատի այդ ուղղությամբ:

Վենքի Հարվելը հարցրեց, թե մեկ ուրիշ, ավելի շատ հարցեր պարունակող հարցաթերթիկ ևս կուղարկվի ծնողներին:
Շերոն Քուսեռն պատասխանեց, որ սա սկզբնական հարցաթերթիկ էր:

Ջոն Պարամո – աշակերտներին խմբականային և առանձին խորհրդատվություն է հարկավոր: Ընտանեկան ծառայությունների գործակալությունը (FSA) լավ ռեսուրս է հանդիսանում: Պետք է համոզվել, որ մենք արդյունավետորեն ենք տարբերակներ առաջարկում աշակերտներին:

Շերոն Քուսեռ – դասավանդման խումբ
    ● Տարրական դպրոցներ
    ● Միջնակարգ դպրոցներ
    ● Հատուկ ուսուցում/անգլերեն սովորողներ
    ● Կրթական տեխնոլոգիա և ուսումնական ծրագիր

● Ցանկանում ենք յուրաքանչյուր խմբի հետ հանդիպել շաբաթը մեկ անգամ, մեկ ժամ տևողությամբ: Պետք է համոզվել և հոգալ աշակերտական յուրաքանչյուր խմբի կարիքներն՝ անկախ հեռակա ուսուցման, հիբրիդ մոդելի կամ անձամբ դպրոց հաճախելու պարագային:

Փիտր Քնապիկ - Ընտանիքի/համայնքի ներգրավվածություն
● Հուսով եմ տեղեկացնել դասավանդման խմբին ընտանիքների կարիքների մասին
● Հետաքրքրվում ենք հարևան դպրոցական շրջանների ծրագրերով
● Երեխաների խնամքը հսկայական խնդիր է հանդիսանում: Կաշխատենք Տղաների և աղջիկների ակումբի, Զանգի շուրջ և այլ ծրագրերի հետ:
● Ծնողների կրթություն – Օրինակ՝ ծանոթացնել տեխնոլոգիայի հետ, որպեսզի ավելի լավ տեղեկացված լինեն:

Դեբրի Կ. – Գործող խումբ – չորեքշաբթի օրերին, կեսօրից հետո ժամը 4-ին
● Մաքրություն/ախտահանում
● Բյուջեի մտահոգություններ Budget concerns
● Սննդի ծառայություն – ամենալավ մեթոդը դպրոցում սնունդ մատակարարելու համար
● Տեխնոլոգիա
● Բուժկետ

Հարցեր/մտահոգություններ կա՞ն

1. Թոնի – Ինչպե՞ս պլանավորել այն աշակերտների համար, ում ծնողները, չեն ցանկանում ետ ուղարկել երեխաներին դպրոց:
    ա. Սերա – զուգահեռ պլան մշակել
    բ. Մաթն ասաց դասավանդող խմբին օգտվել APEX/կրթության անկախ ակադեմիայի մոդելից
2. Լիսա Ռալուի – Կօգտվենք արդյո՞ք Լոս Անջելեսի դպրոցների միացյալ շրջանի մոդելից, թե կմշակենք մերը:
    ա. Սերա – Մենք օգտվում ենք Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի կերտած բազիսի առաջարկություններիս, թե ինչը հաշվի առնել մեր մոդելը մշակելու ընթացքում:
    բ. Մաթ – Բազիսը մշակվել է Լոս Անջելեսի գավառի դպրոցական շրջանի 35 գերատեսուչների կողմից: Այն պատրաղրողական չէ, բայց ուղեցույց է հրամցնում:
3. Լիսա Ռալուի – Ի՞նչ եք մտածում արտադասարանական ծրագերի մասին – երգչախումբ, նվագախումբ, սպորտ և այլն: Ինչպե՞ս ենք որոշելու, թե ինչպես են դրանք ընթանալու:
    ա. Սերա – Կօգտվենք Վարակի կանխարգելման կենտրոնի (CDC), Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակի (LA Co of Public Health) ընթացիկ առաջարկություններից:
    բ. Շերոն – Դպրոցների տնօրեններն աշխատում են այդ ուղղությամբ՝ հաշվի առնելով ուղեցույցները: Այս թեմայի շուրջ բանակցություններ էինք վարում մինչև անցյալ շաբաթ բազիսի հրատարակումը:

4. Նադալի Ջոնս – Հարցաթերթիկը հասանելի է՞ աշակերտներին:
    ա. Մաթ – Ոչ, բայց այն շատ լավ միտք է: Սերան ասաց, որ կաշխատեն այդ ուղղությամբ:

5. Թամի Շերնը պատասխանում է Հատուկ ուսուցման աշակերտների դասավանդման վերաբերյալ հարցի:

6. Էմիլիո – Այլ լեզվով խոսող ծնողներին հարկավոր է օգնել աջակցելու իրենց երեխաներին:

7. Լուիս Այալա – Կիմանանք արդյո՞ք նախապաես, թե որքան բյուջե ենք ունենալու աշխատանքները վարելու համար, մինչև որոշում կայացվելը:
    ա. Մաթ – Բոլոր խմբերը պետք է աշխատեն անհայտ զումարով, քանի որ ֆինանսավորումը դեռ վերջնական չէ: Առաջարկում եմ գտնել ամենալավ գործածությունը և տեսնել, թե ինչպես այն կընթանա:

8. Թամի- Անկարողունակ աշակերտները հատուկ կարիքներ ունեն, որոնք պետք է քննարկել յուրաքանչյուր ենթակոմիտեի ժողովի ընթացքում: Ինչպե՞ս համոզվել, որ յուրաքանչյուր կոմիտե քննարկում է այն:
    ա. Էմիլիոն և Լենորան առաջարկեցին օգնել:

Սերա – Սա ճկուն խումբ է և եթե որևէ բան այնպես չէ, խնդրում եմ տեղեկացնել ինձ:

Փաստաթղթերը կտեղադրվեն գուգլում և հասանելի կլինի կոմիտեի անդամներին:

Մաթ – շարունակել առաջարկություններ ստանալ, մենք պետք է լինենք մանրակրկիթ, բայց արարգորեն աշխատենք:

Շերոն – Դասավանդման ժողով ԱՅՍ հինգշաբթի

Ջոն – Սոցիալ հուզական ենթակոմիտեի ժողով չորեքշաբթի օրերին, երեկոյան ժամի 6-ի շուրջ: Հրավեր կուղարկենք:
Փիտր – Կհարցնենք թիմի անդամներին, եթե կկարողանանք հանդիպել երկուշաբթի:

Սերան կհրապարակի բոլոր ժողովների ամսաթվերը: Ցանկացած կոմիտեի անդամ կարող է ներկա գտնվել ցանկացած ենթակոմիտեի ժողովի ընթացքում, եթե հղում խնդրի նախագահից: